

**ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՈՃԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(1950-2020-ԱՎԱՆ ԹԹ.)**

<https://doi.org/10.59982/18294359-23.14-dv-14>

Վալտեր Տիգրանի Բերբերյան

ԵՊՀ, Հայոց լեզվի ամբիոն

berberyann@gmail.com

Անփոփագիր

Ընդունված իրողություն է լեզվաբանության զարգացման ընթացքային մի պահի կանգ առնել ու քննական հայացքով ամփոփել: Մեզանում կան հիմնարար աշխատություններ՝ նվիրված դարձվածային ոճագիտությանը (Խ. Բաղիկյան «Դարձվածային ոճաբանություն», Պ. Բեդիրյան «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» և այլն): Այս ոլորտում գրվել են մենագրություններ, հոդվածներ, որոնց վերաբերմամբ ժամանակն է վերլուծական հստակ վերաբերմունք դրսևորելու: Մանավանդ, եթե նկատի առնենք դարձվածային ոճագիտության և խոսքի մշակույթի արագ զարգացումը, ապա, կարծում ենք, որոշակի գնահատումներով եղածն ի մի բերելը անհրաժեշտություն է:

Դարձվածաբանության՝ որպես լեզվաբանական առանձին գիտակարգի ուսումնասիրությունները մշտապես արդիական են, քանի որ երևան են բերում լեզվական նոր իրողություններ: Տարակարծություններ են առկա դարձվածաբանության սահմանների, դարձվածաբանական միավորների տարբերակման, դարձվածքների իմաստաբանական, ձևաբանական, ոճաբանական դասակարգման, թարգմանության և այլ հարցերի վերաբերյալ:

Հոդվածում ներկայացված են դարձվածային ոճագիտության զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.): Ուսումնասիրվել են հայոց լեզվի դարձվածային ոճագիտության մասին գրված աշխատանքները, տարբեր հետազոտություններում առկա դրույթները: Անդրադարձ է կատարվել դարձվածքի՝ որպես լեզվաբանական տերմինի, լեզվական միավորի արտահայտչականության բնութագրերին, դարձվածքների դասակարգումներին, թարգմանության ձևերին ու սկզբունքներին: Մեթոդաբանական հիմք է դարձել եղած տեսական դրույթների համադրումը և վերլուծությունը: Փորձել ենք ժամանակագրական սկզբունքով ներկայացնել գիտական գրականության նյութը:

Հիմնաբառեր. դարձվածք, տերմին, թարգմանություն, համապատասխանություն, արտահայտչականություն, ոճական արժեք, դասակարգում

Ներածություն

Որպես տերմին դարձվածքն ի հայտ է եկել 16-րդ դարում եվրոպական մի շարք լեզուներում: Սկզբնապես դարձվածքն ունեցել է խոսվածք, բարբառ, խոսք, արտահայտու-

թյուն և այլ նշանակություններ, գործածվել է թե՛ լայն (իդիոմատիկ դարձվածքներ, կայուն բառակապակցություններ, առածներ, ասացվածքներ, թեևավոր խոսքեր, ասույթներ, աֆորիզմներ), թե՛ նեղ (միայն իդիոմատիկ դարձ-

վածքներ) իմաստներով: Հայ իրականության մեջ դարձվածքի առաջին սահմանումը տվել է լեզվաբան Մ. Աբեղյանը: Վերջինս գրում է. «Ոչ միայն առանձին բառերի նշանակությունն է փոխվում, այլ նաև բառերի կապակցությունների: Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածքներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել» [Աբեղյան, 124]: Դարձվածքների ոճական նշանակությանը, յուրօրիակ գործածությանը, թարգմանության առանձնահատկություններին անդրադարձել են տարբեր լեզվաբաններ:

Դարձվածքի՝ որպես լեզվաբանական տերմինի, լեզվական միավորի արտահայտչականության ամփոփ բնութագիրը հետևյալն է.

ա) դարձվածքը ինքնին բառակապակցություն է, առանձին բառը հազվադեպ կարող է դարձվածքի արժեք ունենալ,

բ) դարձվածքը պատկանում է կայուն բառակապակցությունների խմբին, բնորոշ է բաղադրիչների ուժեղ կամ պակաս սերտաճումով. ընդ որում՝ իմաստաբանական (բովանդակային) պլանում անտրոհելի է, իսկ կառուցվածքային (արտահայտության) պլանում բաղադրիչները (կամ դրանցից որևէ մեկը) անփոխարինելի են,

գ) իբրև բաղադրություն, ի տարբերություն ազատ (շարահյուսական) բառակապակցության, դարձված ամեն անգամ չի ստեղծվում տվյալ իրադրության համար, այլ պատրաստի վերարտադրվում է (գործածության մեջ է դրվում) միևնույն բառաքերականական կազմով,

դ) դարձվածն ունի փոխաբերական իմաստավորում, որը նրան տալիս է պատկերավորություն, մեծ մասն արտահայտում է խոսողի հուզագագացական վերաբերմունքը, և

որն էլ նրան դարձնում է լեզվական ոճավորման միջոց,

ե) դարձվածքը կարող է ձևականորեն համընկնել ազատ բառակապակցությանը, բայց էապես տարբերվում է նրանից,

զ) դարձվածքը կարող է սերել ազատ բառակապակցությունից, բայց կարող է և ինքնուրույն կազմավորում ունենալ,

է) որոշ դարձվածքներ հանդես են գալիս նախադասության տեսքով,

ը) դարձվածքը իմաստաբանական պլանում կարող է հարաբերակցություն ունենալ առանձին բառի հետ,

թ) դարձվածքը ձևականորեն նմանվում է հարադիր բարդություններին, մինչդեռ հարադրության բաղադրիչը կարող է անկախ բառային արժեք ունենալ կամ չունենալ, իսկ դարձվածքի բաղադրիչը սովորաբար անկախ գործածվող բառաձև է. հարադրական բարդության բովանդակությունը բխում է բաղադրիչների իմաստից, պայմանավորված է նրանով, մինչդեռ դարձվածքի բովանդակությունը հիմնականում կարող է անվանողական արժեք ունենալ, նրա հուզաարտահայտչականությունը թույլ է, դարձվածքինը՝ ուժեղ,

ժ) դարձվածքները իբրև բառագիտական միավորներ պատկանում են բառապաշարի որոշակի շերտերի, ունեն գործառական իրենց ոլորտները [Պետրոսյան, 175]:

Դարձվածային ոճագիտական մտքի պատմության ուսումնասիրությունները երևան են բերում տարբեր դասակարգումներ:

Ս. Մելքոնյանի կատարած դասակարգումները, ըստ էության, նորություն էին հայ դարձվածային ոճագիտության պատմության մեջ: Նա առանձնացրել է՝

ա) միջոճական դարձվածքներ (*օրինակ՝ գոյություն կռիվ, կաշվից դուրս գալ*),

բ) բանավոր խոսակցական լեզվի դարձվածքներ (*օրինակ՝ ձեռքից գնալ, թրև գալ*),

գ) գրքային բնույթի դարձվածքներ խմբերը (*օրինակ՝ երկնքից աստղեր վայր բերել*) [Մելքոնյան, 192]:

Լեզվաբանը դարձվածքները բաժանել է նաև դրական, բացասական, ընդհանուր վերաբերմունք արտահայտող խմբերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթախմբերը: Օրինակ՝ դրական վերաբերմունք արտահայտող դարձվածքները լինում են տարբեր տեսակի (հիացական, զարմացական, կարեկցական բնույթի և այլն):

Պ. Պողոսյանը ներկայացրել է ժողովրդական և գրական դարձվածքներ խմբերը: Ըստ ոճագետի՝ առաջինները հագեցած են ոճական լիցքավորումով, իսկ գրական դարձվածքները աստվածաշնչական, առասպելաբանական, պատմական հին գրական աղբյուրներից բխած լինելով՝ բերում են իրենց հետ հների իմաստությունը, խոսքին տալիս վսեմություն, հնության փայլ, այն դարձնում վեհաշուք [Պողոսյան, 218]: Ի տարբերություն ժողովրդական դարձվածքների՝ գրական ոլորտի դարձվածքները զիջում են թվաքանակով: Անդրադարձ կատարելով գործածական բարձր հաճախականություն ունեցող ժողովրդական դարձվածքներին՝ նկատում ենք, որ դարձվածքների այս խումբը մեծամասամբ դիմակայել է ժամանակի փորձությանը. այս ընթացքում որոշ դարձվածքներ կորցրել են իրենց երբեմնի գործածությունը, գործածության ոլորտը՝ ճանապարհի հարթելով լեզվական այլ իրողությունների: Յաճախ օգտագործվող ժողովրդական դարձվածքներից են՝ *շան մսի գին, շառի մեջ ընկնել, թանկից էժան չկա, հախից գալ, մեխի գլուխ, հալումաշ լինել, մեռելի գույն* և այլն:

Լ. Եզեկյանը, հետևելով ռուս լեզվաբանության մեջ իշխող տեսակետներին, դարձվածքները բաժանում է երեք խմբի՝ ա. դարձվածաբանական սերտաճում, բ. դարձվածաբանական միասնություն, գ. դարձվածային

կապակցություն՝ անդրադառնալով կառուցվածքային-ոճական յուրահատկություններին [Եզեկյան, 183-184]:

Խ. Բադիկյանը խորությամբ է ներկայացրել դարձվածքների ձևաիմաստային կամ իմաստաձևային տեսակների ոճական արժեքը, մենիմաստ և բազմիմաստ դարձվածքները: Նա առանձնացրել է դարձվածային գոյական տարբերակներ, բայական տարբերակներ, քերականական տարբերակներ (հոլովական, թվային, հարցական-ժխտական, դրական-բացասական, սեռի չեզոքացման): Դարձվածաբանական համակարգում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում դարձվածային նորաբանությունները, որոնց մինչ Խ. Բադիկյանը հիմնավոր անդրադարձ չի կատարվել: Նա դարձվածային նորաբանությունները դասակարգում է չորս խմբի՝ ա. դարձվածային նորաբանություններ, բ. պոտենցիալ դարձվածներ, գ. դիպվածային դարձվածքներ, դ. հեղինակային դարձվածային նորաբանություններ [Բադիկյան, 109]: Ինչպես Պ. Պողոսյանը, այնպես էլ Խ. Բադիկյանը տարանջատում է գրական, ժողովրդախոսակցական, բարբառային, ժարգոնային և այլ դարձվածային միավորներ: Ուշագրավ է, որ լեզվաբանը անդրադարձել է նաև զանգվածային լրատվության միջոցներում դարձվածային միավորների առկայությանը, ոճական դերին: Ըստ Խ. Բադիկյանի՝ դարձվածային համակարգում գործում են ոճաբանական գրեթե բոլոր միջոցներն ու դարձույթները՝ պատկերավորություն ու մեղմասածություն, բառախաղ ու հանգավորում, աստիճանավորում ու բացթողում, երգիծանք ու հեզմանք, պարադոքս ու օքսիմորոն և այլն: Այս լեզվական իրողությունները պատկերավորման-արտահայտչական համակարգի բաղադրիչներ են:

Դարձվածքներին վերաբերող ուսումնասիրություններում, աշխատանքներում, բառա-

րաններում, սովորաբար, առանձնացվում են նաև արհամարհական (*օրինակ՝ շան պես քարշ գալ, գրասենյակի մուկ*), գոեհիկ (*օրինակ՝ որձատու գազար, էշ ուտել, էշ մեծանալ, ռեխը ցրիվ տալ, քոսոտ շուն, շան վաստակ*), հեգնական (*օրինակ՝ գեղեցիկ աչքերի համար, լեզուն գրպանը դնել, խելացի Դավիթ*), ծաղրական (*օրինակ՝ խելքի տոպրակ, տերտերի չափ բան գիտենալ*) և այլ խմբերի դարձվածքներ:

Դարձվածքները, ունենալով ոճական զգալի նշանակություն, թարմություն են հաղորդում խոսքին:

Ե. Գևորգյանը ընդգծում է դարձվածքների ոճական արժեքը, հատկապես, գեղարվեստական խոսքում. դրանց գործածությունը նպատակային լինելուց բացի հատուկ ուշադրություն է պահանջում: Նա գրում է. «Տարբեր վիճակների նկարագրությունը պահանջում է դարձվածքների տարբեր ընտրություն ու գործածություն» [Գևորգյան, 31]: Անհրաժեշտ դարձվածքի ճիշտ ընտրությունը, գործածությունը ստեղծագործական բարդ, դժվարին աշխատանք է, այն պահանջում է խորիմացություն:

Մերօրյա լեզվաբանները դարձվածքները դիտարկում են որպես հայերենի բառապաշարի առանձնահատուկ շերտ: Նրանք մատնանշում են, որ դարձվածքների միջոցով կարելի է իրականացնել ամենատարբեր ոճական գործառույթները: Ոճաբանության դիրքերից դարձվածքները զգալի հետաքրքրություն են ներկայացնում, բայց միայն այն դեպքում, եթե դրանք որևէ ոճական գործառույթ են իրականացնում [Շահվերդյան, 135]: Կարևորություն է տրվում դարձվածքների ճիշտ գործածությանը: Դարձվածքի նպատակային և հաջող փոփոխությունը ակտիվացնում է դարձվածքի իմաստը, թարմություն հաղորդում խոսքին [Ավետիսյան, 110]: Տեղին գործածված դարձվածքը ապահովում է խոսքի հակիրճությունը,

սեղմությունը, ճշտությունը: Անթուլյատրելի են դիտարկում դարձվածքների միախառնումը, դարձվածքով անհարկի անձնավորումը, դարձվածքների բառային կազմի աղավաղումը, քերականական անհարկի փոփոխությունները՝ հոգնակի թվի փոխարինումը եզակիով կամ հակառակը, կապերի անճիշտ փոփոխությունը և այլն [Ավետիսյան, 111]:

Յետաքրքրական է դարձվածքների թարգմանությունը որպես ոճական խնդիր: Ամենից առաջ դարձվածքները, այսպես ասած, թարգմանվում են նույն լեզվում. խոսքը բառային հոմանիշներ ունեցող դարձվածքների մասին է: Դրանք լեզվի մեջ ոճական արժեք են ստանում և կիրառվում են պատկերավորման, իմաստի սաստկացման համար: Լեզվի համար ավելի արժեքավոր են այն դարձվածքները, որոնք թարգմանելի չեն և բացատրվում են նկարագրական եղանակով: Չթարգմանվող դարձվածքները, որ, ի տարբերություն նախորդների, անհամեմատ քիչ են, նոր հասկացություններ են բերում՝ առանձնապես հարստացնելով լեզվի բառապաշարը [Գևորգյան, 39]:

Գ. Զահուկյանը և Ֆ. Խլղաթյանը նշում են, որ դարձվածքները բառացիորեն չթարգմանվող յուրահատուկ արտահայտություններ են [Զահուկյան, Խլղաթյան, 98]: Իրականում դարձվածքները թարգմանվում են հատուկ սկզբունքներով, եղանակներով: Դարձվածքների թարգմանության ժամանակ տարբերակում են մի քանի եղանակ՝ ա) համարժեք (ադելվատ) թարգմանություն, այդ թվում՝ բացարձակ համարժեքով և մոտավոր (հարաբերական) համարժեքով, բ) դարձվածքային համապատասխանություն, գ) նկարագրական թարգմանություն: Համարժեքը կարող է լինել ամբողջական և մասնակի (եթե ընդօրինակվում են բազմիմաստ դարձվածքի բոլոր նշանակությունները՝ այն ամբողջական է, եթե նշանակություններից մեկը՝ այն մասնակի է):

Բերենք դարձվածքների հայերեն-ռուսերեն-անգլերեն թարգմանությունների բնութագրական տարբեր օրինակներ.

- մուգ ձի (ընտրություններին քիչ հայտնի թեկնածու) – темная лошадка (малоизвестный кандидат на выборах) – a dark horse
- մեռածի նման քնել – спит мертвым сном – dead to the world
- համատեղել անհամատեղելին – совмещать несовместимое – to eat one’s cake and have it too
- ծայրը ծայրին հասցնել – сводить концы с концами – to make both ends meet
- երիտասարդ, թարմ (ինչպես վարունգ) – свежий как огурчик – fit as a fiddle
- ընդհանուր լեզու գտնել – ладить (с) – to get along with
- խաբեության զոհ դառնալ, հայտնվել հիմար վիճակում – стать жертвой надувательства, оказаться в дураках – to get stuck

Թարգմանող լեզվի համակարգում համարժեք միավորի չիմացությունը կարող է երևան բերել բազմաթիվ աղավաղումներ, աղճատումներ, այդ թվում՝ ոճական: Ուստի առաջարկում ենք դիտարկել համատեքստը: Համատեքստն է որոշում՝ որքանով «նեղ» կամ «լայն» նշանակություն պետք է ունենան թարգմանական տեքստում բառերը, որոնք և կկազմեն անհրաժեշտ իմաստն արտահայտող նախադասությունը: Այն ընդգծում է բառի, բառակապակցության, արտահայտության, դարձվածքի կոնկրետ բովանդակությունը, ինչպես նաև արտահայտչականությունը: Կարևորագույն դեր ունի համատեքստը, հատկապես, դարձվածքների, բազմիմաստ բառերի թարգմանության ժամանակ:

Դարձվածքների թարգմանության ժամանակ անհրաժեշտ է խորապես տիրապետել երկու լեզուներին, մշակութային արժեքներին և հաշվի առնել լեզվական և արտալեզվական

գործոնները: Հաճախ դարձվածքի համարժեքը տարբեր լեզուներում կապված տարբեր պատկերացումների ու այլաբանությունների հետ, արտահայտվում է միանգամայն այլ բաղադրիչներով [Գևորգյան, 43]: Այդպիսի դարձվածքների համարժեքները գտնելը համեմատաբար դժվար է և պահանջում է թարգմանչական մտքի թռիչք ու լավատեղյակություն: Ներքոբերյալ դարձվածքներում փոխվել է բաղադրիչ, սակայն իմաստը պահպանվել է:

- գրողի ծոցը գնալ – to go to the dogs
- իշու խելք – as silly/stupid as a goose
- շան բախտ ունենալ – lucky devil
- եզի պես համառ – as stubborn as a mule

Դարձվածքների իմաստն անըմբռնելի մեկնաբանելու, հնարավոր այլ սխալներից խուսափելու համար հարկավոր է ունենալ համապատասխան գիտելիքներ պատմության, գրականության, ինչպես նաև սովորույթների, հավատալիքների մասին: Այս գործոնների առկայության դեպքում մենք կունենանք առավել հաջողված թարգմանություններ: Մեծ դժվարություն է ներկայացնում գտնել մի լեզվի դարձվածքի դիմաց մեկ ուրիշ լեզվի դարձվածքի համարժեքը, որը լիովին արտահայտի այդ իմաստը: Նման թարգմանությունը բարդ և պատասխանատու գործ է: Իրենց իմաստը, ոճական զանազան երանգների ճշգրիտ փոխանցումը սկզբնաղբյուր լեզվից թիրախ լեզու դժվարացնում է ուսումնասիրողի, թարգմանչի աշխատանքը:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դարձվածային ոճագիտությունն ունի իր ուրույն տեղը ոճագիտության ասպարեզում: Խ. Բաղիկյանի հեղինակած գիրքը՝ «Դարձվածային ոճաբանություն»-ը, դարձվածային ոճագիտության վերաբերյալ մինչ օրս առկա եզակի գործերից է. այն դարձվածային ոճագիտության ասպարեզում չի կորցրել իր

արդիականությունը և տեսական հարուստ աղբյուր է ոճագիտական ուսումնասիրությունների համար: Դարձվածաբանության ուսումնասիրությունները չեն սպառվում, հնարավորություն են ընձեռում դարձվածքների թարգմանության, տարածման վերաբերյալ գործնականում նոր լուծումներ առաջադրել և երևան են հանում շատ հետաքրքիր լեզվական և մշակութային իրողություններ: Եթե 1950-ական թթ. տրվում են ընդամենը դարձ-

վածքի լեզվական մակարդակի սահմանումներ, ներկայացվում կիրառական որոշ առանձնահատկություններ, ապա հետագայում առանձնացվում են դարձվածքների ոճաբանական դասակարգումներ, խմբեր, բացատրվում ոճական նրբություններ, երևան են գալիս ոճագիտական խորքային վերլուծություններ, ինչպես նաև թարգմանական հարցեր և խնդիրներ:

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Երկեր, 2 հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 2016:
2. Ավետիսյան Յու., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 2014:
3. Բաղդկյան Խ., Դարձվածային ոճաբանություն, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 2000:
4. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, «Լույս» հրատ., 1969:
5. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, Հեղինակային հրատ., 2006:
6. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, «Լույս» հրատ., 1984:
7. Շահվերդյան Թ., Ոճագիտություն, «Լուսակն» հրատ., Երևան, 2010:
8. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:
9. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք առաջին, Երևան, Երևանի Համալսարանի հրատ., 1990:
10. Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ., Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ: Ոճաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1976:

**ISSUES OF IDIOMATIC STYLISTICS
(FROM THE 1950S TO THE 2020S)**

Valter Berberyan

YSU, Chair of Armenian language
berberyannn@gmail.com

Abstract

It's an accepted fact to stop at a moment in the course of the development of linguistics and summarize it with an examination view. We have fundamental works dedicated to idiomatical stylistics (K. Badikyan "Idiomatical Stylistics", P. Bediryan "Modern Armenian Idiomatics", etc.). Monographs and articles have been written in this field, regarding which it is time to show an analytical attitude. Especially if we take into account the rapid development of idiomatical stylistics and rhetorics, we think, it is necessary to bring together the existing ones with certain evaluations.

Studies of idiomology as a separate linguistic discipline are always up-to-date, as they reveal new linguistic realities. There are disagreements about the boundaries of idiomology, differentiation of idiomatical units, morphological, stylistic classification of idioms, translation, and other issues.

The article presents the basic problems of the development of idiomatical stylistics (from the 1950s to the 2020s). We have studied the works written idiomatical stylistics and analyzed the provisions in various research projects. Reference was made to the expressiveness characteristics of the idiom as a linguistic term, language unit, classifications of idioms, forms, and principles of translation. The methodological basis is a combination of existing theoretical provisions. We have tried to present the material in the scientific literature chronologically.

Keywords: idiom, term, translation, congruence, expressiveness, stylistic value, classification.

Ներկայացվել է՝ 18.03.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 20.04.2023թ.